Կարգապահական գործ թիվ ԿԳ-16216

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունիսի 27-ի թիվ 98-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/60-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱԿՈԲ ՃԱՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հակոբ Ճարոյանին (արտոնագիր թիվ 1474) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

25.10.2016թ. Պալատ է մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Արմեն Խաչատրյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 21.10.2016թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0057/01/16 քրեական գործով դատական նիստի ժամանակ նախագահողի հարցին, թե պաշտպանն ինչու՞ չի ներկայացել նախորդ երկու դատական նիստերին, պաշտպան Հակոբ Ճարոյանը **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** պատասխանել է, որ ինքը պարտավոր չէ պատասխանել այդ հարցին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածի համաձայն ինքն իրավունք ունի երկու անգամ բացակայել դատական նիստերից:

Որոշման համաձայն՝ նախագահողը պարզաբանել է, որ պաշտպանը պարտավոր է ներկայացնել իր չներկայանալու պատճառները, որպեսզի դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.[1] հոդվածի համաձայն գնահատի, թե նա հարգելի

պատճառով չի ներկայացել դատական նիստին, թե չարամտորեն խուսափել է դատական նիստին ներկայանալուց: Ըստ էության, պաշտպանը հրաժարվել է դատարանի օրինական կարգադրությունը կատարել և պնդել է, որ պարտավոր չէ դատական նիստին չներկայանալու պատճառները դատարանին հայտնել:

Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածով նախատեսված իրավական նորմերը և վերլուծելով Հակոբ Ճարոյանի գործողություններն ու նկատի ունենալով, որ վերջինս, ըստ էության, չի կատարել դատարանի օրինական կարգադրությունները, իր գործողություններով խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքին (այդպես էլ չպարզված է մնացել Հակոբ Ճարոյանի նույն գործով նախորդ երկու դատական նիստերին չներկայանալու պատճառները) և այդ կերպ անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, Դատարանը գտել է, որ փաստաբան Հակոբ Ճարոյանին պատասխանատվության ենթարկելու համար պետք է դիմել ՀՀ փաստաբանների պալատ:

Դատարանը 21.10.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է. *«Թիվ ԵԱԴԴ/0057/01/16 քրեական գործով ամբաստանյալ Էդգար Առաքելյանի պաշտպան Հակոբ Ճարոյանի /ՀՀ փաստաբանների պալատի անդամ, արտոնագիր թիվ 1474/ նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ փաստաբան Հակոբ Ճարոյանին պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատին:»:*

Դիմումին կից ներկայացվել է թիվ ԵԱԴԴ/0057/01/16 քրեական գործով 21.10.2016թ. դատական նիստի ձայնագրառման կրիչը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 28.10.2016թ. թիվ 447-Ա/ԿԳ-16216 որոշմամբ՝ փաստաբան Հակոբ Ճարոյանի (արտոնագիր թիվ 1474) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագրքի)** 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով

30.10.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ իր կողմից 21.10.2016թ. դատական նիստի ընթացքում էթիկայի որևէ կանոն չի խախտվել, ինչն ակնհայտ է նույն օրվա դատական նիստի ձայնագրառման կրիչից: Բացատրությանը կից ներկայացրել է նույն դատական նիստի կրիչը, ինչպես նաև դատարան ներկայացման ենթակա ինքնաբացարկի միջնորդության օրինակը:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

30.12.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանը կազմել է եզրակացություն:

09.01.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունիսի 27-ին, ժամը՝ 18:10-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատարանում քննվող ԵԱԴԴ/0057/01/16 քրեական գործով 21.10.2016թ. դատական նիստի ընթացքում դատարանը կիրառել է դատական սանկցիա՝ պաշտպան Հակոբ Ճարոյանի կողմից դատարանի հարցերին պատասխանելուց խուսափելու և նախորդ դատական նիստերին չներկայանալու պատճառները չմատնանշելու համար:

Դատական սանկցիա կիրառելուն նախորդել է նիստը նախագահող դատավորի և փաստաբանի միջև կայացած հետևյալ խոսակցությունը.

Դատարան- Պաշտպան, ինչու երկու դատական նիստի չեք ներկայացել*:*
Պաշտպան- *Ես պարտավոր չեմ պատասխանել այդ հարցին:*
Դատարան-*Ինչպե՞ս:*
Պաշտպան- *Պարտավոր չեմ պատասխանել այդ հարցին:*

Դատարան-*Ինչ՞ու:*
Պաշտպան- *Որովհետև նմանատիպ նորմ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, որ Դուք իրավունք ունեք ասեք ինչու՞ եք բացակայել, ես էլ պարտավոր եմ պատասխանել, նմանատիպ նորմ գոյություն չունի:*
(…)
Դատարան-*Երբ դատական նիստին չարամտորեն խուսափում է կողմը ներկայանալ, դատարանն իրավունք ունի կիրառել դատական սանկցիաներ Դուք դրա հետ կապված Ձեր ներկայանալու-չներկայանալու պատճառները ներկայացրեք դատարանին, որպեսզի դատարանն այն գնահատի, Դուք չարամտորեք չեք ներկայացել, թե՝ ոչ: Հասկանալի՞ է :*
Պաշտպան- *Ես պարտավոր չեմ այստեղ հիմնավորել …*
Հարգելի դատարան, գոյություն ունի 304 հոդված, որտեղ հստակ ֆիկսված է՝ պաշտպանի երեք անընդմեջ բացակայության դեպքում…, ես բացակայել եմ երկու անգամ և ոչ երեք անգամ, հետևաբար դա չի կարող դիտվել չարամտորեն, ինչպես Դուք եք ասում, այլ դա պարզապես տեխնիկական հարցեր են, որ չեմ ներկայացել, ես նորից եմ կրկնում, պարտավոր չեմ ներկայացնել, թե ինչու չեմ ներկայացել: Որևէ չարամտորեն բան չկա…:
(…)
Դատարան- *Չե՞ք ներկայացնում Ձեր պատճառները, ինչու չեք ներկայացել դատական նիստին:*
Պաշտպան- *Ոչ, չեմ ներկայացնում:*

Վերը շարադրված բոլոր փաստերը հաստատվում են դատական նիստի ձայնագրառման կրիչով, Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 02.06.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Հակոբ Ճարոյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 25.06.2012թ.: 2012-2017թթ ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 3 կարգապահական վարույթ:

- 06.06.2014թ. թիվ 106-ԿԳ/1-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 և 2.7.2 ենթակետերի խախտման հատկանիշներով և 8 ժամ լրացուցիչ վերապատրաստում /իր հաշվին/ (հիմնական տույժը մարվել է, լրացուցիչ վերապատրասպան դասընթացներին չի մասնակցել)
- 27.04.2015թ. թիվ ԿԳ/65-Ա որոշմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 6.1.1 ենթակետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել է.
- 28.10.2017թ. թիվ 448-Ա/ԿԳ-16217 Կանոնագրքի 4.1 կետի հիմքով հարուցված կարգապահական վարույթը գտնվում է նախապատրաստման փուլում:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հակոբ Ճարոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն կարգապահական գործի շրջանակներում Պալատի Խորհուրդը նախ հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցին.

Արդյոք փաստաբանը պարտավո՞ր է պատասխանել դատարանի հարցերին և առաջադրված հարցերի պատասխանելուց հրաժարվելը ինքնին անհարգալից վերաբերմունք է դատարանի նկատմամբ, թե՝ ո՞չ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ *«**պաշտպանը պարտավոր է՝** ... 2) **ենթարկվել** դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, **դատական նիստը նախագահողի <u>օրինական կարգադրություններին</u>»**:*

Կանոնագրքի 4.1 կետի (Վարվելակերպի կանոնները դատարանում) համաձայն՝ «*փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, **<u>պետք է ենթարկվի այդ դատարանի</u>** կամ տրիբունալի **<u>կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին</u>**: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ»:*

Վերոնշյալ իրավական նորմերի բառացի բովանդակությունից մասնավորապես «օրինական կարգադրություն» բառակապակցությունից ուղղակիորեն հետևում է, որ պաշտպանը պարտավոր է կատարել ոչ թե ցանկացած կարգադրություն, այլ՝ միայն կարգադրությունները, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով և ունեն պոզիտիվ իրավական ամրագրում: Մինչդեռ, օրենսդրությամբ որևէ հիշատակում չկա, որ քրեական գործով որպես պաշտպան մասնակցող փաստաբանը պարտավորություն է կրում պատասխանելու դատարանի հարցերին կամ դատարանը իրավասություն ունի կարգադրելու վերջինիս պատասխանել հարցերին: Պալատի խորհուրդը արձանագրում է, որ նախորդ դատական նիստերին բացակայելու պատճառների մասին դատարանին փաստարկներ և պատճառներ մատնանշելը փաստաբանի իրավունքն է, վստահեցնելու, որ բացակայության համար եղել են հարգելի պատճառներ: Այլ կերպ ասած՝ դատարանը նման տվյալների վերաբերյալ տեղեկություններ չունենալու դեպքում զրկված չէ հնարավորությունից գնահատական տալ այդ հարցերին:

Տվյալ դեպքում փաստաբան Հակոբ Ճարոյանը հրաժարվել է պատասխանել նախագահող դատավորի հարցերին, իսկ վերջինիս դատական սանկցիան կիրառել է

հենց հարցերին պատասխանելուց հրաժարվելու, այլ ոչ թե նախորդ դատական նիստերին անհարգելի բացակայության համար՝ արձանագրելով, որ այդպես էլ պարզ չդարձավ նախորդ երկու դատական նիստերից բացակայության պատճառները:

Պալատի խորհուրդը միաժամանակ հարկ է համարում նշել, որ ընդունելի չեն նաև փաստաբան Հակոբ Ճարոյանի փաստարկներն են առ այն իբր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 304-րդ հոդվածով ամրագրված իրավական նորմը հնարավորություն է տալիս երկու անգամ բացակայել դատական նիստերից և նման վարքագիծը ինքնին իբր իրավաչափ է: Այսպես.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 304 հոդվածի համաձայն՝

«1. Պաշտպանը դատական քննությանը մասնակցելիս օգտվում է մեղադրողի հետ հավասար իրավունքներից:

2. Պաշտպանի չներկայանալու և այդ նիստում նրան մեկ ուրիշ պաշտպանով փոխարինելը հնարավոր չլինելու դեպքում գործի քննությունը հետաձգվում է: Դատական նիստին չներկայացած պաշտպանի փոխարինումը թույլատրվում է միայն ամբաստանյալի համաձայնությամբ: ***Եթե ամբաստանյալի կողմից հրավիրված պաշտպանի մասնակցությունն անհնար է անընդմեջ երեք դատական նիստի չներկայանալու կամ տևական բուժում պահանջող հիվանդության կամ որևէ այլ հիմքով երկար ժամանակով դատական նիստին ներկայանալու անհնարինության պատճառով, դատարանը, հետաձգելով դատական քննությունը, իրավունք ունի ամբաստանյալին առաջարկել ընտրելու այլ պաշտպան, իսկ նրա հրաժարվելու դեպքում՝ նշանակել նոր պաշտպան:*** *Գործը հետաձգելիս, լուծելով պաշտպանին փոխարինելու հարցը, դատարանը հաշվի է առնում նման որոշման նպատակահարմարությունը (դատական քննության վրա արդեն ծախսված ժամանակը, գործի բարդությունը և դրա հետ կապված դատական քննությանը նոր մասնակցող պաշտպանի կողմից գործի նյութերի ուսումնասիրման տևողությունը և այլ հանգամանքներ): Գործին նոր մասնակցող պաշտպանին դատարանը բավարար ժամանակ է տրամադրում գործի նյութերն ուսումնասիրելու համար: Նա իրավունք ունի միջնորդելու կրկնել ցանկացած գործողություն, որը դատական քննության ընթացքում կատարվել է նախքան իր ընդգրկվելը գործին, և որի արդյունքում գործի համար էական հանգամանքներ են պարզվել»:*

Վերոնշյալ իրավական նորմի բառացի բովանդակությունից հետևում է, այն ընդամենը երաշխիք է, որ պետական մարմինները չմիջամտեն ամբաստանյալի և պաշտպանի ներքին հարաբերություններին առանց դրա համար ծանրակշիռ փաստարկներ ունենալու, այսինքն՝ իրավական նորմի նպատակը վարույթն իրականացնողի գործողությունների կանոնակարգումն է ամբաստանյալին այլ պաշտպան առաջարկելու կամ նշանակելու հարցում: Պալատի Խորհուրդը արձանգարում է, որ համապատասխան հիմքերի առկայության դեպքում մեկ անգամ դատական նիստի չներկայանալը նույնպես կարող է գնահատվել որպես անհարգելի և առաջացնել համապատասխան իրավական հետևանքներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. **Փաստաբան Հակոբ Ճարոյանի (արտոնագիր թիվ 1474) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 16216 կարգապահական վարույթը կարճել:**

2. **Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հրանտ Անանյան